Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-1220-17.12.2025-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2018 թվականի փետրվարի 09-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 27-րդ հոդվածի 5.1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Դատարանի կազմը փոխվելու կամ դատական կազմում փոփոխության դեպքում գործը (վերաքննիչ բողոքը) վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը որոշում է կայացնում գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն ընդհատման պահից շարունակելու, իսկ առաջին ատյանի դատարանում դատաքննությունն ավարտված լինելու դեպքում՝ դատաքննության փուլից վերսկսելու մասին, բացառությամբ այն դեպքի, երբ առկա է գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն սկզբից սկսելու անհրաժեշտություն: Դատարանը կարող է փոփոխել իր որոշումը, եթե գործին մասնակցող անձը դատարանի որոշման կայացումից հետո երկշաբաթյա ժամկետում ներկայացնում է այդ մասին պատճառաբանված միջնորդություն:»:

Հոդված 2. Օրենսգրքի 29-րդ հոդվածում.

1) 2-րդ մասում «Նախնական դատական նիստի ավարտից հետո մինչև դատաքննության ավարտն ինքնաբացարկ կամ բացարկ կարող է հայտնվել, եթե այն հայտնող անձը հիմնավորում է, որ ինքնաբացարկի կամ բացարկի հիմքը ծագել կամ

իրեն հայտնի է դարձել նախնական դատական նիստի ավարտից հետո և մինչև այդ չէր կարող հայտնի լինել» բառերից հետո լրացնել «կամ եթե տեղի է ունեցել դատարանի կազմի փոփոխություն և գործի քննությունը շարունակվել է ընդհատման պահից» բառերով.

2) 3-րդ մասում «Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանում բողոքի քննությունն սկսվելուց հետո մինչև բողոքի քննության ավարտն ինքնաբացարկ կամ բացարկ կարող է հայտնվել, եթե այն հայտնող անձը հիմնավորում է, որ ինքնաբացարկի կամ բացարկի հիմքը ծագել կամ իրեն հայտնի է դարձել բողոքի քննությունն սկսվելուց հետո և մինչև այդ չէր կարող հայտնի լինել» բառերից հետո լրացնել «կամ եթե Վերաքննիչ դատարանում տեղի է ունեցել դատական կազմի փոփոխություն և բողոքի քննությունը շարունակվել է ընդհատման պահից» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասում «հայցվորին (դիմողին) փոխարինելու վերաբերյալ միջնորդություն չներկայացվելու» բառերից հետո լրացնել «կամ կողմին նրա իրավահաջորդով չփոխարինելու» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 160-րդ հոդվածում.

1) վերնագիրը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «Գործի վարույթը կասեցնելու, վերսկսելու կարգը և հետևանքները».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ և 5-րդ մասերով.

«4. Գործի վարույթը կասեցնելու մասին որոշում կայացնելու օրվանից կասեցվում է նաև գործի քննության՝ սույն օրենսգրքի 179.1-ին հոդվածով սահմանված կամ դատարանի որոշմամբ երկարաձգված ժամկետը, որի ընթացքը շարունակվում է գործի վարույթը վերսկսելու մասին որոշում կայացնելու օրվանից:

5. Գործի վարույթը կասեցնելու, ինչպես նաև գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումը վերացվելու դեպքում գործի քննության՝ սույն օրենսգրքի 179.1-ին հոդվածով սահմանված կամ

դատարանի որոշմամբ երկարաձգված ժամկետի ընթացքը շարունակվում է վերաքննիչ դատարանի դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:»:

Հոդված 5. Օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասում «անմիջականորեն» բառից հետո լրացնել «, բացառությամբ դատաքննության փուլում դատարանի կազմը փոխվելու կամ դատարանի կազմը փոխվելու հիմքով դատաքննությունը վերսկսելու դեպքերի, երբ գործին մասնակցող անձանց համաձայնությամբ դատարանը կարող է որոշում կայացնել նախքան դատարանի կազմի փոփոխությունը հետազոտված ապացույցները դատական նիստում հետազոտված համարելու վերաբերյալ՝ առանց դրանք անմիջականորեն հետազոտելու» բառերով:

Հոդված 6. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 179.1-ին հոդվածով.

«Հոդված 179.1. Դատարանում գործերի քննության ժամկետը

1. Գործն առաջին ատյանի դատարանում քննվում և լուծվում է հայցադիմումը (դիմումը) վարույթ ընդունվելուց հետո ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան վեց ամսվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով:

2. Դատարանը կարող է պատճառաբանված որոշմամբ ոչ ավելի, քան երկու անգամ երկարաձգել սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետը՝ յուրաքանչյուր դեպքում առավելագույնը երեք ամիս ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետում չեն ներառվում գործի վարույթի կասեցման ժամանակահատվածը, հաշտության և հաշտարարության համար դատարանի կողմից նշանակված ժամկետը և դատական հանձնարարության կատարման ժամանակահատվածը:

4. Սույն հոդվածով նախատեսված կարգավորումները կիրառելի չեն սնանկության գործերի և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերի նկատմամբ:»:

Հոդված 7. Օրենսգրքի 427-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-6-րդ կետերով» բառերը փոխարինել «հոդվածով» բառով.

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված հայցադիմումների (դիմումների) հիման վրա հարուցված գործերի վրա, բացառությամբ սույն օրենքի 1-3-րդ, 5-րդ հոդվածների, որոնք տարածվում են նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վարույթ ընդունված հայցադիմումներով գործերի քննության վրա:

3. Նախքան սույն օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված գործերը ենթակա են լուծման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ինն ամսվա ընթացքում, և կարող են դատարանի պատճառաբանված որոշմամբ երկարաձգվել երկու անգամ՝ յուրաքանչյուր դեպքում ոչ ավելի, քան երեք ամսով:

Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 7. 2018 թվականի փետրվարի 09-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 27-րդ հոդվածի 5.1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Դատարանի կազմը փոխվելու կամ դատական կազմում փոփոխության դեպքում գործը (վերաքննիչ բողոքը) վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը որոշում է կայացնում գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն ընդհատման պահից շարունակելու, իսկ առաջին ատյանի դատարանում դատաքննությունն ավարտված լինելու դեպքում՝ դատաքննության փուլից վերսկսելու մասին, բացառությամբ այն դեպքի, երբ առկա է գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն սկզբից սկսելու անհրաժեշտություն: Դատարանը կարող է փոփոխել իր որոշումը, եթե գործին մասնակցող անձը դատարանի որոշման կայացումից հետո երկշաբաթյա ժամկետում ներկայացնում է այդ մասին պատճառաբանված միջնորդություն:»:

Հոդված 8. Օրենսգրքի 29-րդ հոդվածում.

1) 2-րդ մասում «Նախնական դատական նիստի ավարտից հետո մինչև դատաքննության ավարտն ինքնաբացարկ կամ բացարկ կարող է հայտնվել, եթե այն հայտնող անձը հիմնավորում է, որ ինքնաբացարկի կամ բացարկի հիմքը ծագել կամ իրեն հայտնի է դարձել նախնական դատական նիստի ավարտից հետո և մինչև այդ չէր կարող հայտնի լինել» բառերից հետո լրացնել «կամ եթե տեղի է ունեցել դատարանի

կազմի փոփոխություն և գործի քննությունը շարունակվել է ընդհատման պահից» բառերով.

2) 3-րդ մասում «Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանում բողոքի քննությունն սկսվելուց հետո մինչև բողոքի քննության ավարտն ինքնաբացարկ կամ բացարկ կարող է հայտնվել, եթե այն հայտնող անձը հիմնավորում է, որ ինքնաբացարկի կամ բացարկի հիմքը ծագել կամ իրեն հայտնի է դարձել բողոքի քննությունն սկսվելուց հետո և մինչև այդ չէր կարող հայտնի լինել» բառերից հետո լրացնել «կամ եթե Վերաքննիչ դատարանում տեղի է ունեցել դատական կազմի փոփոխություն և բողոքի քննությունը շարունակվել է ընդհատման պահից» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասում «հայցվորին (դիմողին) փոխարինելու վերաբերյալ միջնորդություն չներկայացվելու» բառերից հետո լրացնել «կամ կողմին նրա իրավահաջորդով չփոխարինելու» բառերով:

Հոդված 10. Օրենսգրքի 160-րդ հոդվածում.

1) վերնագիրը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «Գործի վարույթը կասեցնելու, վերսկսելու կարգը և հետևանքները».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ և 5-րդ մասերով.

«4. Գործի վարույթը կասեցնելու մասին որոշում կայացնելու օրվանից կասեցվում է նաև գործի քննության՝ սույն օրենսգրքի 179.1-ին հոդվածով սահմանված կամ դատարանի որոշմամբ երկարաձգված ժամկետը, որի ընթացքը շարունակվում է գործի վարույթը վերսկսելու մասին որոշում կայացնելու օրվանից:

5. Գործի վարույթը կասեցնելու, ինչպես նաև գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումը վերացվելու դեպքում գործի քննության՝ սույն օրենսգրքի 179.1-ին հոդվածով սահմանված կամ դատարանի որոշմամբ երկարաձգված ժամկետի ընթացքը շարունակվում է վերաքննիչ դատարանի դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:»:

Հոդված 11. Օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասում «անմիջականորեն» բառից հետո լրացնել «, բացառությամբ դատաքննության փուլում դատարանի կազմը փոխվելու կամ դատարանի կազմը փոխվելու հիմքով դատաքննությունը վերսկսելու դեպքերի, երբ գործին մասնակցող անձանց համաձայնությամբ դատարանը կարող է որոշում կայացնել նախքան դատարանի կազմի փոփոխությունը հետազոտված ապացույցները դատական նիստում հետազոտված համարելու վերաբերյալ՝ առանց դրանք անմիջականորեն հետազոտելու» բառերով:

Հոդված 12. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 179.1-ին հոդվածով.

«Հոդված 179.1. Դատարանում գործերի քննության ժամկետը

1. Գործն առաջին ատյանի դատարանում քննվում և լուծվում է հայցադիմումը (դիմումը) վարույթ ընդունվելուց հետո ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան վեց ամսվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով:

2. Դատարանը կարող է պատճառաբանված որոշմամբ ոչ ավելի, քան երկու անգամ երկարաձգել սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետը՝ յուրաքանչյուր դեպքում առավելագույնը երեք ամիս ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետում չեն ներառվում գործի վարույթի կասեցման ժամանակահատվածը, հաշտության և հաշտարարության համար դատարանի կողմից նշանակված ժամկետը և դատական հանձնարարության կատարման ժամանակահատվածը:

4. Սույն հոդվածով նախատեսված կարգավորումները կիրառելի չեն սնանկության գործերի և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերի նկատմամբ:»:

Հոդված 7. Օրենսգրքի 427-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-6-րդ կետերով» բառերը փոխարինել «հոդվածով» բառով.

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված հայցադիմումների (դիմումների) հիման վրա հարուցված գործերի վրա, բացառությամբ սույն օրենքի 1-3-րդ, 5-րդ հոդվածների, որոնք~~ը~~ տարածվում են ~~է~~ նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վարույթ ընդունված հայցադիմումներով գործերի քննության վրա:

3. Նախքան սույն օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված գործերը ենթակա են լուծման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ~~վեց~~ ինն ամսվա ընթացքում, և կարող են դատարանի պատճառաբանված որոշմամբ երկարաձգվել երկու անգամ՝ յուրաքանչյուր դեպքում ոչ ավելի, քան երեք ամսով:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (Կ-1220-17.12.2025-ՊԻ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (Կ-1220[1]-17.12.2025-ՊԻ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (Կ-1220[2]-17.12.2025-ՊԻ-011/1) ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ				
1.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 8-րդ հոդված**	Առաջարկում ենք կողմին նրա իրավահաջորդով չփոխարինելու դեպքում վարույթը վերսկսելու նորմին հետադարձություն տալ՝ հաշվի առնելով, որ այն միտված է դատարանի ծանրաբեռնվածության նվազեցմանը: Ըստ այդմ, առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածում «գործերի վրա» բառերից հետո լրացնել հետևյալ «, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի, որը տարածվում է նաև մինչև սույն	**Ընդունվել է:** **Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասում կատարվել է համապատասխան լրացում:**	**Ընդունվել է:**

			օրենքն ուժի մեջ մտնելը վարույթ ընդունված հայցադիմումներով գործերի քննության վրա» բառերը:		
2.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 8-րդ հոդված**	Բարձրագույն դատական խորհրդի կողմից հրապարակված հաշվետվությունից բխում է, որ 2025 թվականին ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան մուտքագրվել է ընդհանուր 29.633 հայցադիմում: Ըստ այդմ, հիմք ընդունելով դատավորների ծանրաբեռնվածությունը՝ առաջարկում ենք երկարաձգել նախքան օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված գործերի քննության՝ Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասում նշված ժամկետը՝ վեց ամսից դարձնելով ինը ամիս: Նշվածը մի կողմից կապահովի ժամկետի իրատեսականությունը, մյուս կողմից՝ կապահովի գործերի համակողմանի քննություն իրականացնելու հնարավորությունը:	**Ընդունվել է:** **Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասում կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**

3.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 8-րդ հոդված**	Առաջարկում ենք դատական կազմի փոփոխության դեպքում գործի քննությունը ընդհատման պահից շարունակելու, նախքան դատարանի կազմի փոփոխությունը հետազոտված ապացույցները դատական նիստում հետազոտված համարելու՝ Նախագծի 1-ին, 2-րդ և 5-րդ հոդվածներով նախատեսված կարգավորումներին տալ հետադարձություն՝ հաշվի առնելով, որ դրանք միտված են գործերի արագ և արդյունավետ լուծմանը և բարենպաստ են քաղաքացիների համար:	**Ընդունվել է:** Նախագծի 8-րդ հոդվածում **կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**
	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ				
1.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Առաջարկում ենք հստակեցնել վերաքննիչ դատարանում կազմի փոփոխության դեպքում գործը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու դեպքերը և նախատեսել, որ խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ փոխվում է Վերաքննիչ դատարանի կազմում նախագահող դատավորը: Ըստ այդմ, առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով լրացվող՝ 12-րդ հոդվածի 2.1-ին և 2.2-րդ մասերում «Վարչական դատարանի կազմը փոխվելու կամ կազմում փոփոխության դեպքում,» բառերից	**Ընդունվել է:** Նախագծի 1-ին հոդվածում **կատարվել են համապատասխան փոփոխություններ:**	**Ընդունվել է:**

			հետո լրացնել «, իսկ Վերաքննիչ դատարանի կազմում նախագահող դատավորի փոփոխության դեպքում» բառերով:		
2.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Որպես նախորդ առաջարկի տրամաբանական շարունակություն՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով լրացվող՝ 12-րդ հոդվածի 2.2-րդ մասից հանել «վարչական դատարանում» բառերը, որպեսզի պարզ լինի դատաքննության կանոնի՝ նաև վերաքննիչ դատարանին վերաբերելի լինելու փաստը, իսկ 2.4-րդ և 2.6-րդ մասերում «դատարանի» բառից առաջ հանել «վարչական» բառը:	**Ընդունվել է:** Նախագծի 1-ին հոդվածում **կատարվել են համապատասխան փոփոխություններ:**	**Ընդունվել է:**
3.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 8-րդ հոդված**	Հաշվի առնելով 2025 թվականին վարչական դատարան ներկայացված հայցադիմումների ընդհանուր թիվը՝ 25.954, ըստ այդմ, դատավորների ծանրաբեռնվածությունը՝ առաջարկում ենք երկարաձգել նախքան օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված գործերի քննության՝ Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասում նշված ժամկետը՝ վեց ամսից դարձնելով տասներկու ամիս: Նշվածը մի կողմից կապահովի ժամկետի իրատեսականությունը, մյուս	**Ընդունվել է:** Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ **մասում կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**

			կողմից՝ կապահովի գործերի համակողմանի քննություն իրականացնելու հնարավորությունը:		
4.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 8-րդ հոդված**	Առաջարկում ենք դատական կազմի փոփոխության դեպքում գործի քննությունը ընդհատման պահից շարունակելու, նախքան դատարանի կազմի փոփոխությունը հետազոտված ապացույցները դատական նիստում հետազոտված համարելու՝ Նախագծի 1-ին, 5-րդ և 6-րդ հոդվածներով նախատեսված կարգավորումներին տալ հետադարձություն՝ հաշվի առնելով, որ դրանք միտված են գործերի արագ և արդյունավետ լուծմանը և բարենպաստ են քաղաքացիների համար:	**Ընդունվել է:** Նախագծի 8-րդ հոդվածում **կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**
	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ				
1.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Սահմանադրական դատարանի 23.09.2025 թվականի թիվ ՍԴՈ-1797 որոշմամբ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասին, 61-րդ հոդվածին և 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր է ճանաչվել Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասը: Հաշվի առնելով քաղաքացիական և քրեական դատավարությունների	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			վարույթային առանձնահատկությունները, առավելապես վերանայման վարույթների տարբերությունները՝ առաջարկում ենք հանել Նախագծի 1-ին հոդվածը, ըստ այդմ՝ փաթեթից հանելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքն ամբողջությամբ՝ հաշվի առնելով, որ այն բաղկացած է մեկ հոդվածից:		